

ՈՒԽՏ
ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

ԳՐԵԱՅ

Մ. Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆ



ՔԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի Վ. Ա. Ն Ս

Ս. ՅԱԿՈՎԼԻԵԱՆՅ

1874



Եկեալ կամաւ. 'ի մահ խաչին ,
Վասն սիրոյ իւր դարտիերին :

ՈՒԽՏ

Հ Ա Յ Ր Ե Ն Ա Ս Ի Ր Ի

Ուխտիւք ինքրեի ես իսկ
 ինքնին նշոյլ շինեչ 'ի ֆրիա-
 տոսէ վասն եղբարց իմոց եւ
 ազգականոց ըստ մարմնոյ:

Պօղ. Հռւմ. Թ. Ծ:

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Լ Հայրենա-
 սիրութիւն, Ազգ և ազգա-
 սիրութիւն՝ շատ սուխրա-
 կան բառեր դարձած են
 մեր խորհրդածութեց, խօ-
 սակցութեանց և գրուածոց
 մէջ: Եթէ բանաս այս վեր-
 ջին քանի մի տարուան Ազգ
 գային յիշատակարանները,
 ճառագրութիւնները, գրուատ-
 ները, թատերական հատ-

ուածները, նամականին և մինչև անգամ աշակերտաց դպրոցական շարագրածները, ամեն տեղ Հայրենասիրութիւն կը կարգաս, ամենու մէջ Ազգասիրութիւն կը լսես (1): Ո՛չ մի դար և ոչ

(1) Թէպէտ Հայրենասիրութիւն եւ Ազգասիրութիւն բառերու կաղնութեանը նայելով՝ մէկը կը նշանակէ սէր առ Հայրենի երկիրն, և միւսն սէր առ Ազգն, բայց որովհետեւ երկուսն եւս անխտրաբար իրարու տեղ գործ դրուած են և շատ անգամ միայն Հայրենասիրութիւն բառով հասկացուած է եւ Ազգասիրութիւն բառի իմաստը, ուստի մենք ևս մեր դրութեան մէջ իրարմէ չըզատեցինք, այլ շատ տեղ երկուսն ևս համանրման իմաստով գործ դրինք: Մեր Աղբային ոսկեղինիկ գրիչներէն մէկը — Եղիշէ վարդապետը — Հայրենաս-

մի ժամանակ այնչափ շնորհակալներ
 կրկնուներ հայրենասիրու-
 թիւն և ազգասիրութիւն
 բառերը, ինչպէս ներկայ
 դարուս մէջ, և ոչ մի դար
 այնպէս ցաւակցութեան և
 սիրոյ կարօտ չէ եղած մեր
 Ազգը, ինչպէս ներկայիս
 մէջ: Թօսքը իրականութե-
 տեղ է բռներ, և ազգա-
 սիրութեան վերայ խօսիլը՝
 բուն ազգասիրութե-
 տեղ: Բայց՝ ազգասիրութիւնը իւր
 առանձին գծագիրն ունի
 և յատկանիշը, իւր առան-

սիրութիւն և Ազգասիրութիւն բա-
 ռերու տեղ գործ դրած ունի-Սուրբ
 Նախնիք, ըստ որում Ազգ և Հայրե-
 նիք սուրբ են հայրենասէր սրտի
 համար:

ճին լեզուն և յառուկ նը-
 շանաբանը , իւր կառու-
 րումն և իւր արդիւնքը :
 Հազարաւոր ազազակներու
 մէջ՝ հայրենասիրութեան
 բարբառն յայտնի է , և բիւ-
 րաւոր դրօշներու մէջ՝ նո-
 ղա խորհրդանշանը ակնե-
 րեւ . նորա լեզուն՝ Արաս-
 առ-ն է , և նորա պատկը՝ նը-
 ղովը . արտասուք ազգակ-
 ցաց համար , նղովք եղ-
 բարց համար : Այս լեզ-
 ուով խօսեր են բոլոր Հայ-
 րենասէրները , այս պատկով
 պատկուեր են ամեն ճշմա-
 րիտ ազգասէրները : Այս է
 նոցա ուխտը . « Ուխտիւք
 խնդրէի նղով լինել 'ի Քը-

րիտառսէ վասն եղբարց ի-
մոց եւ ազգականաց ըստ
մարմնոյ ։ Այս թնգ լինի
և մեր համար ուխտ և նը-
շանաբան ։

Հայրենասիրութեան ըզ-
գացմունքը ամեն տեղ և
ամեն ժամանակ բնական
և նուիրական զգացմունք
է քարոզուած , և նորա զս-
հը՝ Աստուծոյ և մարդկան
հաճելի զոհ ։ Շատ մարդիկ
այս սիրով վառուած՝ իրենց
անձը զոհած են, և դարերը
վկայած են որ Հայրենասի-
րութիւնը ցնորք է և ոչ
երևակայութեան ճնունդ ,
այլ ցոլմունք և ճառագայթ
է այն նուիրական վառա-

րանին, ուր Նախախնամու-
 թիւնը ամփոփած է մարդ-
 կային բոլոր բարի զգաց-
 մունքները: Այն տեղ, ուր
 է սէր գերդաստանի և սէր
 մարդկութեան, այն տեղ է
 նոյնպէս և սէր Ազգի: Ազ-
 գասիրութիւնը զեղմունք
 է ընտանեկան սիրոյն, և
 մարդասիրութիւն՝ զեղմունք
 ազգասիրութեան: Այս
 երեքն եւս իբրքմէ ազբե-
 րացած են և իբրքու վրայ
 ամրացած: Ամեն կանոնա-
 ւոր և զգայուն սրտերու
 մէջ սիրոյ ճառագայթները
 կանոնաւոր կերպով ցոլա-
 ցած են թէ՛ գերդաստանի,
 թէ՛ ազգի և թէ՛ մարդկու-

Թեան լլտայ : Բայց՝ Աստուած , որ մեր սիրտը և կարողութիւնը գիտէ, այնպէս ստեղծած է զմեզ , որ ամեն բանի մէջ փառքէն դէպ 'ի մեծը գիմենք . մեր սրգիքը սիրելով՝ ուսանինք սիրել մեր ազգակիցները , և ազգակիցները սիրելով՝ սիրեմք զմարդիկ : Մեր ընտանիքը զարգացնենք մեր Հայրենեաց համար և մեր Հայրենիքը հանուր մարդկութեան համար : Երբ կը փափաքինք բարիք առնել մարդկութեան մեր տաղանդով , հանճարով և ըստացուածքով , մատակարարութիւնը մեր հայրե-

նիքէն և աղգէն սկսինք .
 վասն զի առանց ընտանե-
 կան սիրոյ՝ հայրենասիրու-
 թիւն չը կայ, և ոչ առանց
 հայրենասիրութեան՝ մար-
 դասիրութիւն . վասն զի
 ճշմարիտ դպրոց մարդասի-
 րութեան՝ հայրենասիրու-
 թիւնն է, և դպրոց հայրե-
 նասիրութե՛ն՝ ոգին ընտա-
 նեաց : Ուրեմն, ընտանե-
 կան երջանկութեան հա-
 մար աղգ կողծանել, և կամ
 աղգային երջանկութեան
 համար՝ օտար աղգեր ոտ-
 նակոխ առնել, հրեշական
 սկզբունք է այս, արտաքոյ
 բնական և աստուածային
 օրինաց : Նոյնպէս ևս մար-

դասէր ձեանայով ազգու-
թիւն արհամարհել, և ազ-
գասիրութեան էութիւնն
ուրանայ՝ կընչանակէ ըն-
տանիքը ջնջել, որ մեր ու-
րորանն ու գերեզմանն է
և միանգամայն հայրենա-
սիրութեան խանձարուրը:

Այսպէս ահա, հայրե-
նասիրութիւնն, որ ճնուեց
է ընտանեկան սիրոյն եւ
ճնող հանուր մարդասիրու-
թեան, շարժառիթն է և
մեր սրտի խորոց յուզման
և առարկայ ներկայ գրու-
թեան: Բայց յառաջ քան
բացատրելն՝ թէ ի՞նչ է հայ-
րենասիրութիւն և ուխտ
հայրենասիրին, տեսնենք

ամենէն առաջ թէ ի՞նչ է
Հայրենիք և ի՞նչ է Ազգ :

Հայրենիքն է մեր որո-
րանք և գերեզմանք , հայ-
րենակիցներն են մեր մար-
մինք և արիւնք : Հայրենիքն
է այն հասարակաց մայրը ,
որոյ ծոցին մէջ ամենքը կը
ճնանին և կը զարգանան :
Իսկ Ազգն է այն հասարա-
կաց միութիւնք , ուր իրա-
րու հետ կը միանան ան-
հատները , օգուտները և
չահերը , և ամեն կեանքերէ
կը կազմուի ընդհանուր
կեանք , որ չըմբռանիր ան-
հատներու հետ , այլ կը
յարատեւէ անընդհատ :
Այս ընդհանուր և յարա-

տեւ կեանքն է միայն, որ
կարող է անսպառելի բա-
րութեանց աղբիւր լինել,
յառաջադիմութեան ըս-
կզբունքն, զարդացման ոյժ
ու պահպանութիւնն և աղ-
գային մարմնոյ ապահովու-
թիւնն ու երջանկութիւնն :

Այս է հայրենեաց եւ
ազգի համառօտ գծադի-
րը, մաքի տուած բացաա-
րութեանը նայելով : Բայց
մի՞թէ հայրենասէ՞ր սրտի
համար Ազգ և հայրենիք
մեկնութիւն ունին և սահ-
ման . — ո՛չ բնաւ : Մենք գի-
տենք որ հայրենիքէն ընդ-
արձակ ծովերով և ցամա-
քով բաժնուած հայրենա-

սիրի համար , կարծես թէ ,
 կենդանութեան կազմու-
 ըիչ տարերքը փոփոխուած
 են , ոչ նորա լեզուն՝ նոյն
 լեզուն է , ոչ միտքը՝ նոյն
 միտքը , և ոչ սիրտը՝ նոյն
 սիրտը : Մենք գիտենք որ
 մենք կը սիրենք Հայրենիքը ,
 ինչպէս մեր կեանքը , և կը
 սիրենք շատ բնականօրէն ,
 ինչպէս կը շնչենք օդը : Մենք
 գիտենք որ ազգի վեշտը
 մեզ կը վշտացնէ և բարե-
 բաստութիւնը մեզ կ'ուրա-
 խացնէ : Մենք գիտենք որ
 հայրենասէրները ուրա-
 խութեամբ կը մեռանին
 Հայրենեաց եւ Ազգի հա-
 մար : Բայց հայրենեաց գե-

զեցկու թիւնն է արդեօք և
 Ազգի երջանկու թիւնը, զոր
 մենք կը սիրենք . — ո՛չ ամե-
 նեւին : Վասն զի ողբան
 ամայի է Հայրենիքը և հայ-
 րենասկսաց վիճակը թըշ-
 ուառ , այնքան աւելի ըզ-
 գայի են հայրենասէր սրը-
 տին և այնքան աւելի սի-
 րելի : Ուրեմն բուն իսկ
 Հայրենիքն ու Ազգն են , որ
 կը գրաւեն մեր սիրտը , և
 ոչ թէ 'նոցա շքեղութիւնը
 եւ վայելչութիւնը : Բայց
 թէ ինչո՞ւ կը սիրենք Հայրե-
 նիքը , և ինչո՞ւ սիրով կը մե-
 ռանիմք Ազգի համար :
 Հայրենասէր սրտերու մէջ
 պէտք է որոնել այս հարց-

ման պատասխանը , վասն
 զի միտքը պատասխան չու
 նի այս մասին : Ինչո՞ւ Յա
 կոբ և Յովսէփ նահապետ
 ները մահուան ժամանակ
 կ'երգուեցնեն իրենց որդի
 քը՝ օտար հողէ հանել ի
 րենց սոկերքը եւ տանել
 թաղել հայրենեաց մէջ , ի
 րենց հարց հետ : Ինչո՞ւ
 աստուածախօսն Մովսէս
 կենաց դարու թե՛նէն ջըն
 ջուիլ կը խնդրէ իր ազգի
 համար , և ինչո՞ւ Պօղոս կը
 փափաքի և կ'ուխտէ նզով
 լինիլ ՚ի Քրիստոսէ վասն
 եղբարց եւ ազգականաց :
 Ի՞նչ միտք և ի՞նչ հանճար
 կարող է մեկնել և համու

զեղ մեզ . բայց հայրենա-
 սէր սիրտը կը խանդաղա-
 տի և կը զգայ , որ արդա-
 րեւ հայրենիքը քաղցր է
 նաև ոսկերաց համար եւ
 այնչափ մեծ է ազգն , որ
 մարդ ուրախութեամբ կը
 փափաքի նզով լինիլ նորա
 փառաց , բարօրութեան և
 կատարելութեան համար :
 Ուրեմն , այն սէրը , որ կը
 վառի մարդու սրտի մէջ
 իւր հայրենեաց և ազգի
 համար , այն սէրը բնական
 սէր է . բայց 'ի հարկէ դաս-
 տիարակութիւնը եւ կրո-
 թութիւնը մեծ ազդեցու-
 թիւն ունին նոյն սիրոյ զար-
 գացման եւ աճելութեան

համար: Ամեն մարդու սրբա-
 տի մէջ բնականօրէն մի
 ձգտումն կայ իւր հայրենա-
 կան եւ ծննդական երկրի
 համար, և մի համակրու-
 թիւն իւր ազգակցաց եւ
 հայրենակցաց համար: Քայց
 զգայուն և կիրթ սրտերու
 մէջ այս ձգտումն ու հա-
 մակրութիւնը սրբուած զը-
 տուած են եւ նուիրակա-
 նութեան հասած: Հայ-
 րենասիրութեան հուրը՝
 մաքուր հոգիներու մէջ
 սրբազան հուր է և ազնիւ
 հուր, որոյ արտաքին երե-
 ւոյթները մեզ յայտնի են,
 բայց ներքին ջերմութիւնը,
 այն սքանչելի ելեքորակա-

նութիւնը, որոյ հալորդակ-
 ցութիւնը սրտի և արեան
 մէջ է, մեղ համար անմեկ-
 նելի է : Չարգացիւր օտա-
 րութեան մէջ, մեծացիւր
 փարթամութեան մէջ, հե-
 ուի հայրենիքէ, հեոի հայ-
 րենակիցներէ, բայց ունե-
 ցիւր սիրտ, ունեցիւր կըր-
 թութիւն, և մի օր անշուշտ
 սիրտդ պիտի թռթռայ,
 աչքերդ պիտի պղտորին
 արտաստուներով, և հոգիդ
 պիտի մղէ զքեզ հայրենիք
 որոնել, ազգակիցներ խընդ-
 քել, ճոխ ապարանքներէ
 խուսափիլ եւ զեղբարքք
 շըջիլ : “ Անկաւ ’ի սիրտ նո-
 րա, կ’ասէ Ս. Գիւրքը Մով-

սիսի համար , շրջիլ զեղ-
 բարբբ , զորդւովքն իսրա-
 յելի : Թողաւ Մովսէս ֆա-
 րաւոնի արքայական պալա-
 տը , թագաւորական գեր-
 գաստանի որդեգրու թիւնը
 և զանկացաւ իւր բեռնա-
 կիր եղբարց հիւզերուն այ-
 ցելու թիւն առնել , նոցա
 մէջ շրջիլ , նոցա հետ ապ-
 րիլ և նոցա հետ մեռնիլ .
 կամխօք ասել , ջերմ սիրով
 սկսաւ սիրել իւր արե-
 նակիցները : Ասան զի , սի-
 րել՝ կը նշանակէ ապրիլ ,
 միայն անձը սիրել՝ կը նշա-
 նակէ անձի համար ապրիլ .
 միայն ընտանիք սիրել՝ կը
 նշանակէ ընտանեաց հա-

ճար ապրիլ, և Աղբ սիրել՝
 կը նշանակէ ազգի համար
 ապրիլ : Աղբի սիրտը կը
 բարձրի ազգասիրի սրտի
 վրայ, և իւր սիրտը ազգի
 սրտի վրայ : Աղբասէրը կը
 շնչէ այն շունչը, ինչ որ
 կը շնչեն հայրենակիցքը .
 վասն զի մի աներեւոյթ
 շունչ կայ, որ մէկէն կ'անց-
 նի միւսին : Այս սիրային
 տուրևառութեան մէջ, այս
 համակեցութեան մէջ հայ-
 րենասէրը անձնաւորութի
 շունի, նորա ցաւը և մխի-
 թարութիւնը ազգի մէջ է :
 Նա ազգի հետ կը հիւան-
 դանայ, ազգի հետ կը տա-
 ռապի, և ազգի հետ կը

միսիթարի : Նորա սրտի խո-
 բոց մէջ ձայն մի կայ , որ
 միշտ կ'աղաղակէ . « Ո՞րք 'ի
 ձէնջ հիւանդանայ և ես
 ոչ հիւանդանամ » : Նա
 սեպհականութիւն չունի ,
 վասն զի նորա սիրաբ , բա-
 զուկները , տքնութիւնը ,
 վաստակը , հարստութիւ-
 նը , կեանքը եւ աղօթքը ,
 բոլորը աղգի համար են :
 Եւ միթէ այս միայն : —
 Ո՛չ , ոչ , աղգի ցաւն զգալ ,
 աղգի հետ վշտանալ եւ
 աղգի հետ սերտանալ ,
 այս հայրենասիրութեան
 դիւրին ասպարէզն է : Կայ
 աւելի գերագոյնը , աւելի
 սքանչելին , աւելի ծանրն

եւ փափաքելին , այսինքն
 աղգի դառնութեան բա-
 ժակը խմել , որ աղգի քիմ-
 քը քաղցրանայ , աղգի յան-
 յանքը ապաշխարել և նո-
 րա մեղաց համար մեռնիլ ,
 որ աղգը ներողութեան
 արժանանայ , աղգի համար
 ջնջուիլ յերկրէ և երկնքէ ,
 որ աղգը երկիր և երկնք
 ունենայ , աղգի համար նը-
 ղով լինիլ , որ աղգը օրհ-
 նութե արժանանայ : Այս
 տեղ է ահա հայրենասի-
 րութեան նուիրական կա-
 տարը , այս տեղ է հայրե-
 նասիրի ուխտը , և այս էր
 որ պայման կը դնէր Մով-
 սէս և կը պաղատէր “ Աղա-

չեմ գրեղ, Տէր, եթէ թու
 ղուս զմեզ ժողովրդեան,
 թող, ապա թէ ոչ ջնջեա
 զիս ՚ի դպրութենէ քում
 մէ, յոր գրեցեր » • (Եւր .
 1, Բ . 22 :) Այս ցաւով եւ
 հեծութեամբ կ'ախտէր
 Պօղոս . « Աւխտիւք խնդրէի
 նղով լինիլ ՚ի Քրիստոսէ
 վասն ազգականաց իմոց եւ
 եղբարց » : Այսպէս կը փա
 փաքէր եւ երեմիաս, որ իւր
 գլուխը ծով գառնայ եւ
 աչքերը արտասուաց ազ
 քիւր՝ իւր ազգի փոխարէն
 լալու . « Ռ՞ տայր զգլուխ
 իմ ՚ի ջուր, եւ զաչս իմ
 յաղբիւրս արտասուաց,
 զի նստէի եւ լայի զմեզ

Ժողովրդեան իմոյ ” : Այս
 է հայրենասէրներու ուխտը . այսպէս ուխտած են
 հին և նոր Ուխտի աննման
 պատգամախօսները : Այս
 լեզուով խօսած են մարդ-
 կային ազգի պատմագրու
 թեան մէջ եղած բոլոր
 ճշմարիտ ժողովրդասէրնե-
 րը , ազգասէրները և մար-
 դասէրները : Չափազանց
 սիրողները չափազանց վըշ-
 տեր կրած են , ոմանք նը-
 զուած ու մատնուած են ,
 ոմանք տանջուած և չար-
 չարուած են , եւ շատերը
 իրենց կեանքը ուրիշներու
 կենաց համար զոհած են :
 Սէրը անիծից և նախատա-

նայ խաչի վրայ բարձրա-
 ցուց այն երկնային Մար-
 դասէրը , որոյ սիրտը բու-
 լոր մարդկութեան սրտի
 վրայ էր , եւ բովանդակ
 մարդկութեան սիրտը՝ իւր
 սրտին վրայ , այն սրտին
 վրայ , որով հիւանդ աղ-
 գերը կ'ողեւորին եւ կը
 կենդանանան եւ ճնշեալ
 ժողովուրդները կ'ազատին
 եւ կը զօրանան : Երանի՛ր
 ժողովրդին , որ չըհեռանար
 այս փրկարար սրտէն : Նա
 անբուժելի թշուառութի
 չունենար երբէք , և ոչ մըչ-
 տընջենաւոր գերութիւն :
 Սէրը դատապարտեց ան-
 նման հայրենասէր Մովսէսը

չը մտնել Աւետեաց երկի-
 րը . « Յանդիման տեսցես
 զերկիրն , և անդր մի՛ մտա-
 նիցես » : Սէրը դատապար-
 ատեց Պողոսը իր հայրենի
 յուսոյ համար ծանր շղ-
 թաներ կրել . « Ասան յու-
 սոյն Նորայելի կամ 'ի շղ-
 թայս » . (Գործ . ԻԸ . 20) :
 Սիրով շնաչխարհիկն եւ
 սուրբն Գրիգոր խորխորա-
 տըն իջաւ , և ճրգատ ու
 Ներսէս դառնուծէ թիւ-
 նալից բաժակը քամեցին ,
 իսկ սուրբ Աարդանանք և
 Աեւոնդեանք իրենց անձը
 զոհեցին . վասն զի ճշմարիտ
 սէրը առանց զոհի չէ : Ար-
 դարեւ՝ հայրենասիրուծիլը

այնչափ բնական է , որ
մենք հեթանոսական դա-
րուց օրինակներ եւս կա-
րող ենք յառաջ բերել ,
ինչպէս են կողրոս (1) . Դե-

(1) կողրոս վերջին թագաւոր Ա-
թենացւոյ : Սա թագաւորելով 1160
—1152 թուականին նախ քան ըղ-
Քրիտասս , երբ Աթենացիք և Դօրի-
ացիք իրարու դէմ կը պատերազմէ-
ին , պատգամախօսէն լսեց որ այն
կողմը յաղթող պիտի դռնուի որոյ
թագաւորը զոհուի : Ազատութեամբ
զոհեց սա իւր անձը իւր ազգի հա-
մար և Աթենացիք յաղթող հան-
դիտացան : Այնչափ տպաւորութիւն
ազդեց այս անձնազոհութիւնը , որ
Աթենացիք արժան չը համարեցին
ուրիշ մէկը նորա տեղ թագաւոր
դնել , և այսպէս վերջացուցին ի-
րենց թագաւորութիւնը :

ցիւս — Մուս (1) և այլք ,
 բայց ըզձալի է մեղ մա-
 նաւանդ այն հայրենասօխ-
 րութիւնը , որոյ երկրաւոր
 մասունքները զտուած են
 երկնային սիրով , որոյ ա-
 ռարկան է մանաւանդ աղ-
 զի բարոյական կենդանու-

(1) Դէյիոս — Մուս էր հիւպատոս
 Հռովմայեցոյ (545 տարի Քրիստոս-
 սէն առաջ) որ ազատեց Կուռնելի-
 սս Կառը Սամնիացոյ պատերազմին
 մէջ : Իսկ երկու տարիէն յետոյ
 Նատինացոյ դէմ ունեցած պատե-
 րազմին մէջ իւր անձը զոհեց որ
 յաղթութիւն պարգեւէ Հռովմա-
 յեցոյ : Անվեհեր վաղեց գէպ 'ի
 թշնամեաց բանակը եւ սպանուե-
 ցաւ , որով և Հռովմայեցիք յաղ-
 թող գտան :

թիւեր, կատարելութիւնը
 և լուսաւորութիւնը, եւ
 որոյ հիմնաքարն է Քրիստոս-
 նէութեան ազատարար և
 անյաղթ ոգին : Այս սե-
 սակ հայրենասիրութիւնն
 է որ կը խորտակէ ժողովը-
 դեան շղթաները եւ հայ-
 րենիքը կ'ազատէ ապակա-
 նութենէ : Թո՛ղ համախըմ-
 քին ընտանիքներ, թո՛ղ
 գումարին ժողովուրդներ,
 և թո՛ղ շինուին քաղաքներ,
 այս ամենը մեզուի և մըր-
 ջունի աշխատանք է : Բայց
 թո՛ղ իրաւունքը հաստատ-
 ուի, արդարութիւնը թա-
 գաւորէ, լուսաւորութիւնը
 ծառայի, — ահա՛ մարդու

աշխատանք , ահա ճշմա-
 րիտ հայրենասիրի բաղ-
 ճանք : Վասն զի , այս վսե-
 մական գաղափարը կը ծը-
 նանի մարդկութեան հա-
 մար՝ Պղատան , Սոկրատ ,
 Քալիկէ եւ Նեվտոն . իսկ
 վայրենութիւնը և տիրա-
 պետութեան ահուելի կիր-
 քը կը ծնանի Չինգիսթան-
 ներ եւ Աենկթիմուրներ :
 Վասն զի , ինչպէս կատա-
 րեալ մարդը՝ նոյնպէս եւ
 կատարեալ հայրենասէրը
 լուսաւորութեան գագա-
 թին պէտք է որ երևին :

Ճշմարիտ հայրենասէր-
 ները և ժողովրդասէրները
 իրենց ազատութիւն մատ-

նաժ են և կեանքը զոհած ,
 որպէս զի ազգը և ժողո-
 վուրդը կեանք և սնունդ
 թւեննայ արդարութեամբ
 և տղատութեամբ . վասն
 զի , արդարութիւնը ժո-
 ղովորդի հունձն է և հայր .
 իսկ աղատութիւնը՝ նորա
 հարստութիւնը , հանգրս-
 տութիւնը և փառքը : Ա.ա.
 արն զի , կեանքն ուտել իւր-
 մելը չէ , այլ բանական կա-
 տարելութիւնը , առանց
 որոյ չկայ մարդկութիւն ,
 չըկայ և աղգութիւն : Եթէ
 կեանքը զոհելը դիւրին է
 աղգասիրի համար , կարծիք
 չըկայ որ իւր գոյքը զոհե-
 լը աղգի օգտի համար՝ ևս

առաւել դիւրին է :

Հայրենասէրները շատ անգամ ապերախտութեան հանդիպած են իրենց սիրած ազգի կողմէն եւ կը հանդիպին . բայց ոչ ապերախտութեան վրէժխնդիր են , ոչ տրտունջներէ կը փտանան եւ ոչ բանտէ ու կախաղանէ կը զարհուրին : Մովսէս կենաց դպրութենէն կը խնդրէ ջնջուիլ այն ժողովրդի համար , որ անթիւ ապերախտութիւններ եւ թշնամանքներ յարոյց նորա դէմ , նախատեց , յանդիմանեց եւ դառնացոյց : Պօղոս կը խնդրէ նըղով լինիլ այն ազգի որդ-

ւոյ համար, « Որք նղովիւք
 նղովեցին զանձինս, ոչ ու-
 տել և ոչ ըմպել, մինչև
 սպանցեն զՊօղոս » . (Գործ .
 ԻԳ . 14) : Շատ հայրենա-
 սերներ գերեզման անգամ
 չունին այն հայրենեաց մէջ,
 զոր կը սիրեն և որոյ հա-
 մար իրենց անձը կը զօհեն .
 « Եւ ոչ ոք գիտաց զգե-
 րեզման նորա (Մովսիսի)
 մինչև ցայսօր » . (Օրին . 1, Ի) :
 Շատերու անունն անգամ
 քերել ջանացած են այն
 ազգի մէջէն, որոյ սիրոյ
 համար խնդրած են նղով
 լինիլ . « Բարձր՝ ի մէնջ, բարձր
 ՚ի մէնջ, բարձր զգա » . (Գործ .
 ԻԱ . 36) : Ժողովուրդը շատ

անգամ մղած , մերժած և
հեռացուցած է այն աննը-
ման հոգիները , որոնք ան-
քակ կապով կապուած են
եղեր ժողովրդի հետ , և չէ
կամեցեր նուիրական հայ-
րենիքէն մի բուռն հող
անգամ տալ նոցա՝ թաղ-
ուելու համար :

Հայրենասէրները հայ-
րենիքը սիրեր են նոյն իսկ
հայրենակցաց համար , եւ
ազգը սիրեր են նոյն իսկ
ազգի համար . իսկ իրենց
բաժինն եղեր է նղովք և
ապերախառութիւն , զոր , ա-
ռանց նեղանալու , սիրով
խնդրեր և ընդուներ են :
Այս է ահա՛ ոչ միայն ժու-

զուլրդասէրներու և աղգաս-
 սէրներու վարձը , այլ և
 մարդկային ազգի ամեն նը-
 շանաւոր բարերարներու :
 Մինչեւ որ նոքա չեն նզով-
 ուեր և չեն զոհուեր բան-
 տի մէջ , պատերազմի մէջ ,
 կախաղանի վրայ , խարուկի
 վրայ , նոցա սէրը իւր լը-
 րութեան չէ հասեր : Ասան-
 ղի , նոքա այն նուիրական
 շիշն են , որոնք մինչեւ չը
 բեկուին , բովանդակ անու-
 շահոտութիւն չը ծաւալիր
 ժողովրդի վրայ , ազգի վրայ
 և մարդկութե վրայ : Մարդ-
 կութիւնը շատ անգամ
 արձաններ կը կանգնէ այն
 անձանց համար , որոնք ժու

զովւերդը կը մորթեն . եւ
 ընդհակառակն՝ կախաղան
 կը պատրաստէ այն անձանց
 համար , որոնք ժողովրդի
 սիրով կը տոչորին : Շատ
 ուշ միայն ժողովուրդը կը
 զգայ և կ'արտասուէ իւր
 իսկական բարերարներու
 համար , և այս է ժողովրդ-
 դատէրներու կամ ազգա-
 սէրներու անեղծ փառքը
 եւ անմահ յաղթանակը :
 Սակայն , պիտի խոստովա-
 նինք որ ապերախտութիւն
 ամեն ժամանակ ուղղակի
 ժողովրդէն չը բղխէր ազ-
 գատէրներու դէմ , այլ տե-
 սակ մի անձնապաշտ , չա-
 րակամ և վայրենամիտ ան-

ձերէ , որոնք երբեմն իբր
 թեւ ժանտախտ կը վարա-
 կեն ժողովրդի սիրտը , միա-
 քը և իր բարերարներու
 դէմ կը գրգռեն : Այս տե-
 սակ անձինքը միութեան
 բաժանարարներ են : Այս ան-
 ղի մարդը միացած է ըն-
 տանեաց հետ , ազգի հետ
 եւ մարդկութեան հետ :
 Միութեան մէջ է ամբու-
 թիւնը , զոր գերութեան
 և ստրկութեան երկաթնե-
 րը կարող չեն խարտակել :
 միաբանութիւն մէջ է նայե-
 ալէս փոխադարձ ստանդար-
 կութիւնը և կեանքը : Հե-
 տեւապէս միացածը բա-
 ժանել կը նշանակէ սատար

նայի գործ գործել՝ իսկ մի-
 աջածը հալածել, հարստա-
 հարել և մահացնել, ինչ
 անուն կարէ ունենալ այս
 տարաւիելի գործողութիւնը :
 Սակայն, զգայուն արտերը
 հեծութեամբ կը տեսնեն
 չափ անգամ, որ եղբայր
 եղբօր, ազգ ազգի շղթա-
 ներ դարբնած ունի, կը
 տեսնեն փոխանակ օգնա-
 կանութե՞ն՝ արբապիղծ հա-
 ըրտահարութիւն, և փո-
 խանակ Քրիստոսի քաղցը
 եւ մարդասէր սրտկերին՝
 կայենի ուրուականը :

Եւ երբ այս չարեաց
 աղբիւրը կը հետազօտեն,
 կը նշմարեն ակներեւ, ար

այս ամենը տգիտութենէ
 եւ անկրթութենէ յառա-
 ջացած են և մարդոց ու
 ազգաց փոխադարձ պար-
 տուց անկատարութենէն :
 Վասն զի , ամեն անհատ
 պարտք ունի իւր ազգին
 օգնելու , և իւրաքանչիւր
 ազգ պարտք ունի մարդ-
 կութեան օգնելու :

Արովհետեւ , ինչպէս
 անհատները ազգութեան
 անդամ են , նոյնպէս և իւ-
 րաքանչիւր ազգ անդամ է
 հանուր մարդկութեան :
 Ինչպէս ամեն անհատ պար-
 տական է իւր ազգի իրա-
 ւունքը և արդարութիւնը
 պաշտպանել , նոյնպէս ամեն

ազգ պարտական է ազգաց
 իրաւունքը վերականգնել,
 եթէ յամիշտակուած են :
 Վասն զի, իրաւունք սփաշտ-
 պանել՝ կը նշանակէ հանուր
 մարդկութե՛ն բարերարել :
 Միլտիատէս Մարաթոնի
 մէջ, Լէոնիգաս՝ Քերմո-
 սիլէի, Քեմիատոսկէս՝ Սա-
 լամինի և Վարդան՝ Շա-
 ւարչանի մէջ, հայրենի ի-
 րաւանց համար սրտու-
 րազմելով՝ կը պատերազ-
 մէին մարդկային ազգի ա-
 պագայի համար : Այն ազ-
 գը, որ անտարբերութեամբ
 կը նայի իր դրացի ազգի
 ճ՛նշմանը եւ հարստահա-
 րութեանը վրայ, նա ինքը

իր համար փոս կը փորէ ,
 ուր անպատճառ օր մի պիւ
 ախ թաղուի : Իսկ այն աղ
 քը , որ ինքը արդէն իւր
 օգտի համար անտարբեր
 է , նա մի փոտած մարմին է
 մարդկութեան մէջ , որ ա
 ւելի լաւ է չորս կողմը պատ
 քաշել , քան թէ թողուլ
 որ իւր հօտը տարածուի
 և ուրիշները և օ մահացնէ :
 Թէ ինչո՞ւ մեր նիւթէն հե
 ւանալով այս աղքատը հա
 մեմտում ինքերը յառաջ կը
 բերենք , ապահով եմք , որ
 մտադիր ընթերցողները կը
 հասկանան մեր նպատակը :
 Մեր նպատակը այնքան
 տրամաբանել չէ , որքան

ջերմացնել , վասն զի մեր
 առարկան Սէրն է , որ ջեր-
 մութեամբ զգայի կը լինի ,
 քան թէ տրամաբանու-
 թեամբ : Ազգաց պարտուց
 և վիճակի վրայ խօսելով՝
 կամիմք ցոյց տալ հայրե-
 նասիրի զգացման ամենա-
 վերին կէտը , եւ սլափե-
 րացնել թէ ի՞նչ ծանր վըշ-
 տակրութեան տակ է նորա
 փոփոակ սիրտը , երբ սր-
 տին համապատասխան չէ
 իւր հայրենեաց և հայրե-
 նակցաց վիճակը :

Այն հայրենասէր սիր-
 տը , այն ազգասէր թա-
 փանցիկ աչքը , որ կը զգայ
 և կը տեսնէ թէ իւր ազգը

ոչ միայն ընդհանուր մարդ-
 կութեան օգնելու կարո-
 ղութիւն չունի, այլ և իր
 օգտին անգամ անտարբեր
 է, և ազգաց մէջ խեղա-
 թիւր անդամալոյծ մի հա-
 մարուած է: Այն սիրտը,
 որ գրկած ունի իւր հայ-
 բնիքը, իւր բոլոր ազգը
 և նորա վիշտն ու տառա-
 պանքը, այն սրտի նման
 ծանր բան չը կայ աշխար-
 հիս վրայ: Նա ոչ իշխա-
 նական խրախճանութեանց
 մէջ ուրախութիւն ունի,
 և ոչ թագաւորական հան-
 դիսից ժամանակ բերկ-
 րանք: «Ընդէր արտում
 և տխուր են երեսք քո»,

կը հարցնէ Սրտաշէտ Պար-
 սից թագաւորը իւր տա-
 կարապետ Նէեմի խորայե-
 լացւոյն :— «Ձիարդ ոչ տըլ-
 տում և տխուր լիցին և-
 րեսք իմ, կը պատասխանէ
 Նէեմի, վասն զի քաղաքն
 և տուն հօր իմոյ անապատ
 է և դրունքն տարականեալ
 ՚ի հրոյ » : Ի՞նչ է ուրեմն
 բաղձանքդ, վերատին կը
 հարցնէ թագաւորն : Նէ-
 եմի սիրար կը բաբախի,
 միտքը կը յուզի, կը դող-
 դողայ սաստիկ այլայլու-
 թենէն, և կը խնդրէ իւր
 հայրենիքը դառնալ, որ
 թէպէտ աւերուած ու այ-
 րուած էր, բայց քաղցր էր

իւր համար : Ար սրազատէ
 հէեմի . “ Տէր , եթէ եզիտ
 ծառայքս շնորհս առաջի
 երեսաց քոյ և կամիս՝ յղեա
 զիս 'ի Հրէաստան , 'ի քա
 ղաքս յիշատակարանաց
 հարցն իմոց ” . եւ երբ կը
 կատարուի ինդիրը , կար
 ծես թէ ծանր արամուծե
 ճիկեցուցիչ աստուած վե
 մը կը ցնդի կուրծքի վրա ,
 յէն իբրեւ ամենաթեթեւ
 գոլորչի :

Այն հայրենասէրը , որ
 կը տեսնէ իւր հայրենիքը
 աւերակ , քաղաքները հիմ
 նայատակ , նուիրակիան տա
 ճարները փլեալ , նախա
 հարց գերեզմանները կո

խան օտարաց , և յիշատակարանները ու փառքը եղծուած , միթէ չաղաղակէր խորին թախծութեամբ , ինչպէս Նէեմիյն . “ Զիւրդ ոչ տրտում և տխուր լիցին երեսք իմ . վասն զի քաղաքն և տունն հօր իմոյ անապատ է , և դրունքն ասրականեալ ՚ի հրոյ ” :

Այն սրտացած աղգատէրը , որ լոյս և բարոյակրանութիւն կը քարոզէ և Աւետեաց երկիր ու աղատութիւն կ'աղաղակէ , եւ կը տեսնէ որ իւր ժողովուրդը դարձեալ դերութիւն ու Նգիստոս կը սիրէ . եւ բեռնակրութեան

ու խաւարի կը փափաքի ,
 պանկալով ձի և ջորի լինել ,
 քան թէ մարդ , այն տագ-
 նապետը աղգասէրը ինչ-
 պէս չը կրկնէր . “ Տէր , ե-
 թէ թողուս զմեզս ժողո-
 վըրդեան իմոյ , թող , ապա
 թէ ոչ ջնջեա զիս ՚ի դրա-
 րու թենէ կենաց ” :

Այն աղգասէրը , որ կը
 տեսնէ իւր եղբարքը եւ
 աղգահանքը մոլորուած ոչ
 խարներու նման ցրուած ,
 անտուն , անօգնական , ըն-
 տանեկան և հայրենական
 մխիթարութենէ զրկուած ,
 մոխիրը իրենց համար հաց
 դարձած , և իրենց ըմպե-
 լին քրտամբք և արտաս-

ուօք խառնուած , յերկե
 Էրկիր թափառական , ի
 րենց անունը և յիշատակը
 մուցած , այն վշտաջարջար
 աղգասէրը ինչպէս չուխ
 տէր . “ Աւխախք ինդրէի
 նդով լինիլ ’ի Քրիստոսէ
 վասն աղգականաց խնց և
 եղբարց ” :

Այն ժողովրդասէրը ,
 որ կը տեսնէ թէ իւր ժո
 ղովուրդը գտնէ այնչափ չը
 սիրէր իրաւունքը , արդա
 րու թիւեր և աղատութիւ
 նը , որչափ մշակը կը սիրէ
 հունձը , արուեստաւորը՝
 օրական հացը , վաճառա
 կանը՝ հարստութիւնը , նա
 ւաստին հանգստութիւնը

եւ զինուորը՝ փառքը , որ
 գոնէ նիւթականի չափ չը
 մտածէր իւր բարոյական
 արժանաւորութե՛ն վրայ, այլ
 տեսակ մի անասնական ու
 բուսական կեանք կը վարէ .
 կը հարկանեն՝ չը զգար , կը
 շարժեն՝ չը շարժիր , աչք
 ունի՝ չը տեսնէր , և ականջ
 ունի չը լսէր , ի՞նչ կարող
 է ուխտել այս ամենը տես-
 նող և զգացող ժողովրդա-
 սէրը , եթէ ոչ իւր գոյքը
 եւ կեանքը զոհել , միայն
 թէ իւր ժողովուրդը զարթ-
 նու , կենդանանայ և իբրև
 մարդ ապրի մարդկութեան
 մէջ :

Այն ազգասէրը , որ կը

տեսնէ իւր ազգային մար-
 վինը տկար և գունաթափ,
 վերքերը հագած որպէս
 զգեստ, կենդանարար փայ-
 լը աչքերէն շիջած և ծուն-
 կերը կթուցեալ, միթէ չը
 հարցնէր . արդեօք այս իմ
 մարմինն է և սրտները .
 արդեօք այս վերքերս փա-
 թաթող ձեռք չը կայ, ար-
 դեօք այս շիջած տեսու-
 թեանը լոյս տուող չը կայ .
 արդեօք միշտ ծարաւ ժա-
 մանակը լեղի եւ քայանի
 պիտի արբուցանեն : Ա՛հ,
 եթէ այսպէս է, կ'ուխտեմ
 նղուլուիլ, կ'ուխտեմ զոհ-
 ուիլ, և թո՛ղ ապրի այս
 տառապեալը :

Այն ազգասէրը, որ կը
 տեսնէ ամեն օր հաղարա-
 ւոր քրտնաթոր բեռնա-
 կիրներ, որոց կեանքը լա-
 տուերի նման կ'անցնի, կը
 տեսնէ հարիւրաւոր ըն-
 տանիքներ, որոնք տառա-
 պանայ մէջ կը հեծեն եւ
 կը մաշին, կը տեսնէ հա-
 ղարաւոր մանուկներ, առ-
 պատասպարան անուամուկք,
 որոնք թշուառութի մէջ
 կ'աճին, թշուառութեան
 մէջ կը թառամին, ծառայ
 կը ճնանին, ծառայ կը մե-
 ռանին. երբ իւր միլիօնա-
 ւոր ազգակցաց այս ախուր
 պատկերը կը տեսնէ և կը
 դնէ, ի՞նչպէս կարէ չըմբռն

կըտալ և չաղաղակել. «Ո՛չ
 ապաքէն մարմինք եղբարց
 մերոց մարմինք մեր են , և
 որդիք նոցա՝ որդիք մեր . և
 արդ՝ ընդէր տուաք զոր
 դիտ մեր ՚ի ճառայու թիւն ,
 և դատելք մեր վարեալ են
 ՚ի բռնութիւն » . (Նէե՛Տ .
 Ե . 5) :

Այն հայրենասէրը ,
 երբ կը տեսնէ մանաւանդ ,
 որ թէ օտարներէն , և թէ՛
 իր ազգակիցներու մէջ կան
 մարդիկ , որոնք ժողովրդի
 առաւապանաց ժամանակ
 հանգիստ են , որոնք ժողո
 վրդի ողբալու ժամանակ
 իրենք կը ծիծաղին , որոնք
 փոխանակ ժողովուրդը տա


ռասպանաց տղմէն հանե-
 լու՝ աւելի կըխորատուղեն,
 որոնք աղգի վիրաւոր դի-
 ակները կը դիղեն, և այն
 բարձրութեան վրայ իրենց
 աթոռը կը դնեն. այն հայ-
 րենասէրը, որ կը դիտէ թէ
 այն օրինակ որդուէք կան,
 որոնք աղգային վիրաւոր
 մարմինը կը կրճեն և արիւ-
 նը կը ծծեն, որոց աչքը
 արտասուք չունի և սիրտը
 սրտովատ է, որոնք իրենց
 անձին կը զոհեն հազարա-
 ւոր եղբայրներ, ճշմարիտ
 կ'ասեմ, որ այս աղգաս-
 պանութեան ահռելի տե-
 սարանը նկատող աղգա-
 սէրը կենդանի զոհ մի է,

որ հանապազ կը տոչորի և
կը ճենճերի սրտով, մտա-
ծութեամբ և անպատում
թախծութեամբ :

Այսպէս ահա, երբ
քիրտը, արտասուքը, մեր-
կութիւնը, սարկութիւնը
եւ տգիտութիւնը բաժին
են հայրենակցաց, հայրե-
նասիրի բաժինն է նղովք,
նորա ուխտն է նղովք,
նղովք անձին՝ իւր եղբարց
իրաւանց, բարօրութեան
և կենդանութեան համար:

Այս է ազգասէրներու
ուխտը, և այսպէս՝ Ազգի
սէրը կը վառէ և կը սպա-
ռէ նոցա կեանքը, ինչպէս
այն նուիրական հուրը, որ

Դի հուռ մե կ'այրէր զոհը և
 ողջակէզը : Այս ուխտոն էր
 մեր բնաբանը , այս թող
 լինի և մեր նշանաբանը .
 « Աւխտիւք խնդրէի ես խակ
 ինքնին նզով լինիլ ՚ի Քրիս-
 տոսէ վասն եղբարց իմոց
 և աղգականաց լսա մար-
 մնոյ » :



ՅԱՆԿ Գ Ր Ո Յ

Տղագրեաչ 'ի վանս Սրբոց
Յակոբեանց * :



Ազնէս Հայ • դրով և Տաճ • լեզուաւ :
Աղօթագիրք Սրբազան տեղեաց •
աշխարհիկ լեզուաւ , յօրինեալ
բարեպաշտ ուխտաւորաց համար •
Պատկերաւորք :

Անուրջք 'ի Սիօն :

Առաքինութեան ճամբան , կամ
Մենտոր մանկանց :

Աւետարան Ատենի :

Աւետարան Ճաշու :

Աւետարան աւ ձեռն :

Բանաստուծիւն Աշակերտուհեաց
մէջ , Բ • Կ • Կ • 1874 :

Բարոյական պատմութիւններ :

Բացատրութիւն Հրաժարման եւ
Զղջման և սուսուտեան երգոց
Շնորհալույն :

* Աստուծոյ լեզու գրեւոր հաղորդակցութիւն :

Գաղիկ արքայ շայոց :

Գործք Առաքելոց :

Գործ սոկեղնիկ Սամուէլ Ռաբբի
հրէի , աշխարհիկ լեղուաւ :

Գովասանք , նոր պիտ :

Եղեշէ :

Երեւոյթ կրից :

Երկու խօսք Եկեղեցակա . համար :

Եփրեմ խուրին . Ե . պիտ :

Զանազանութիւն հինգ դարուց :
պատմութիւն հին և նոր կտակա-
րանաց , Տաճկերէն լեղուաւ , Պօ-
զոս Պատրիարքի . երեք հատորը
մէկտեղ :

Ընդ հանրական :

Թանգարան խրատու՝ Պօզոս Պատ-
րիարքի . Գ . պիտ :

Թափօրի տետրակ՝ Տարեկան : Սուրբ
Յարութեան Տաճարին մէջ կա-
տարուած Թափօրներու արարու-
ղութիւններուն վրայ :

— Նոյնն՝ Հաբախիան :

Թափօրի տետրակ . Ս . Յակոբայ Ե-
կեղեցւոյ մէջ կատարուած Թա-
փօրներուն :

Թուաբանութիւն :

Ժամագիրք • Խոշորագիր :

Ժամագիրք Ատենի :

Խնդիր Սրբազան տեղեաց (**):

Խորհրդածութիւն Սրբազան Պատարագի , արարեալ սրբոյն Ներսէսի Լաբրոնացւոյ :

Խորհրդատետր Սրբոյ Պատարագի :

Կարգադրութիւն աւուղջութեան :

Կենսագրութիւն Բասթաւայ , աշխարհիկ լեզուաւ * :

Կտակագիր հոգեշահ բանից :

Կրթարան Աւետարանական բանից •

” Սամարացին ,

” Սիմոն Պետրոս :

” Որդիք Աստուծոյ :

Համապատուութի՛ն ԺԲ. Աւաքելոց ,

հանդերձ յաւելուածով . Գ. Կիլիկի :

Համառօտութիւն քրիստոնէական :

Հայելի վիրաց • Հափաբերուլսլուէօթն մահացու մեղաց վրայ ~ :

Հեգերէն , Խոշորագիր :

Հենրիկոս և Մարիամ : վէպ կրթական՝ աշխարհիկ լեզուաւ :

Հրահանգ սիրոյ :

Ղերուքնա եղեսացիս և Եսայի կա .

Թուղիկս Աղուանից :

Ճաշոց գիրք :

Ճառ հաղորդութեան :

Ճառք դպրոցական :

Ճարտասանութիւն առձեռն :

Մատենագրութիւն նախնեաց :

Մատթէոս թուհայեցի , հանդերձ

ծանօթութեամբք :

Մեկնութիւն թղթոյն Եփեսացւոց :

Մեկնութիւն Յայտնութեան Յով-

հաննու աւետարանչի , ի Ներսէ .

սէ Լատիբոնացւոյ :

Միխայելի Ասորւոյ ժամանակադ-

րութիւն :

—Նոյնն՝ հանդերձ ծանօթութեամբ .

Բ . Գ Է Կ :

Յովհաննէս Կաթողիկոս , Պատմու-

թիւն Հայոց , Նոյ Գ Է Կ :

Յովսէփ դեղեցիկ :

Նարեկ :

Նոր ընթերցարան :

Նոր Կտակարան :

Ողբերգութիւնն 'ի մեծն Ներսէս :
 Ուխտ հայրենասիրի . Ք . Կէպ 1874 :
 Ուսումն բարուց . թարգմանեալ
 յիտալական լեզուէ * :

Ուսումն տրամաբանութեան թարգ-
 մանեալ 'ի Գաղ . լեզուէ :

Պատմութիւնն Եկեղեցական :

Պատմութիւնն Ս . Գրոց , աշխարհիկ
 լեզուաւ , դպրատան տղոց համար :

Պատմութիւնն Ս . Երուսաղէմի :

Պատմութիւնն Ս . Լուսաւորչի Տաճ-
 կերէն :

Պատմութիւնն Հոյոց համառօտ ,
 դպրատան տղոց համար :

Պատմութիւնն Ճանապարհորդութե
 'ի Հապէշտան , երկու հատոր :

— Նոյնին Գաղղլերէնը :

Պատմութիւնն Նոր կտակարանի ,
 բարոյական յորդորակներով :

Սաղմոս , Միջոյ :

Սաղմոս , Խոշրագիտ :

Սաղմոս , Մեծագիտ :

Սաղմոս , Փոքրագիտ :

Սաղմոս , ծով Տպեալ 1874 :

Միտն տարեկան կապմեալ 1866 թը-
ւականէն մինչեւ 1872 :

Ստորագրութիւն Երուսաղէմի . ըս-
տառած * :

Տանվիլ , տեղագրութիւն Երու-
սաղէմի :

Տարերք իմաստասիրութիւն , թարգ-
մանեալ յատարական լեզուէ * :

Տեսչութիւն հովուական :

Տրամաբանութիւն , Պատուելի Գը-
րիգորի Փէշոմալճեան * :

Տօնացոյց :

Փոխասաց մանկանց :

Քերական :

Քերական Հայ—Գաղղիերէն :

Քերականութիւն Հայերէն :

Քերականութիւն Գաղղիերէն :

Քրիստոնէական համառ.օտ , Հայե-
րէն և Արաբերէն :

Օրացոյց :



